Կոտրել վախի թակարդը

Կենտրոնացում Աստված ուզում է մեզ ազատել մարդկային վախից:

Ուսումնասիրություն Բանալի համարներ՝ Առակ. 29.25, Ղուկ. 22.54-62:

Մարդկանցից վախենալը շատ տարածված է հավատացյալների մեջ: Մենք հաճախ դա չենք տեսնում որպես հոգևոր կապանք: Ընդհակառակը, մենք սովորաբար դա վերագրում ենք մեր ինքնությանը: Մարդկանցից վախենալը հաճախ արտահայտվում է մեր վարքագծում մարդկանց հաճեցնելու կամ վերահսկելու ձևով:

- *Մարդկանցից վախենալը քեզ մարդկանց թակարդի մեջ է գցում:*

  (Հովհ. 12.42-43, Բ Պետ. 2.19):
  Երբ մենք ինքներս մեզ գնահատում ենք այն բանով, թե ինչ են մարդիկ մտածում մեր մասին, մենք իրականում չենք կարող լինել այնպիսին, ինչպիսին որ կանք: Ընդհակառակը, մեր ինքնությունը կարող է սահմանվել ստով կամ սխալ տեղեկություններով:

- *Մարդկանցից վախենալը քեզ գցում է թակարդն ու հեռացնում Աստծուց:*
  (Ղուկ. 22.54-62, Եր. 17.5):
  Պետրոսը շատ մտերիմ էր Հիսուսի հետ, սակայն մարդկանցից վախենալը պատճառ հանդիսացավ, որ նա ուրանա Հիսուսին: Բարի լուրն այն է, որ երբ մարդկանցից վախենալը մեզ հեռացնում է Աստծուց, Նա մեզ հետ է կանչում: Նա չի մեղադրում մեզ, այլ շարունակում է հետևել մեզ:

- *Մարդկանցից վախենալը թակարդն է գցում մյուսներին քո միջոցով:*

  (Հովհ. 7.13, 9.22, 19.38, 20.19, Մաթ. 23.15):
  Երբ մարդկանցից վախենալը մեզ թակարդն է գցում, մենք վիրավորում և թակարդն ենք գցում մյուսներին: Մենք սա անում ենք վերահսկողության և մերժման միջոցով: Ազատագրումը գալիս է՝ տեսնելով, որ ինքներս թակարդի մեջ ենք, և վստահելի ընկերների միջոցով օգնություն խնդրելով, որպեսզի կարողանանք այս վախը հանձնել Տիրոջը:

Քննարկում

1. Ի՞նչն ամենաօգտակարը քեզ թվաց այս պատգամի մեջ:

2. «Վախը սուտ մարգարեի հոգի է»: Քննարկիր, թե ինչ է նշանակում այս նախադասությունը: Ինչպե՞ս է վախը մեզ հետ խոսում մեր ապագայի վերաբերյալ: Ինչո՞ւ է վախը սուտ մարգարե:

3. Մարդկանցից վախենալու կապանքի երկու վարքագծերից ո՞ր մեկն է քեզ մոտ արտահայտվում՝ մարդկանց հաճեցնե՞լը, թե՞ վերահսկելը: Ինչպե՞ս են մարդկանց հաճեցնելն ու վերահսկելը խախտում մարդկանց հետ մեր փոխհարաբերությունները:

4. Ինչո՞ւ է դժվար ընդունել, որ մենք բռնված ենք մարդկանց հանդեպ վախով:

5. Կարդա Առակաց 29.25-ը: Քո կյանքում եղե՞լ է, որ Աստված քեզ ազատի մարդկանց հանդեպ վախից: Եթե այո, խնդրում եմ, կիսվիր խմբի հետ:

Տուն տար

Ամփոփելով, հիշիր հետևյալ.

- Աստված ուզում է մեզ ազատել մարդկանց հանդեպ վախից:
- Աստված մեզ մշտապես հետ է կանչում, երբ մարդկանց հանդեպ վախը մեզ հեռացնում է Իրենից:
- Մենք ազատվում ենք մարդկանց հանդեպ վախից, երբ այն հանձնում ենք Տիրոջը և օգնության համար դիմում մեր մտերիմներին:

Աղոթիր

Աղոթիր մարդկանց հանդեպ վախից ազատվելու համար: Աղոթիր խմբում եղած այլ կարիքների համար: